600.0035.30.11.99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 1999 թվականի №35
քաղ. Երևան

1999-2000թթ. ջեռուցման ժամանակաշրջանում Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կաթսայատնից առաքված ջերմային էներգիայի սակագնի մասին

Ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և 20-րդ հոդվածի ա) կետով, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը **որոշում է**.

1. Սահմանել՝

   1999-2000թթ. ջեռուցման ժամանակաշրջանում Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կաթսայատնից առաքված ջերմային էներգիայի սակագինը՝ 14313 դրամ/Գկալ, կամ 1607 դրամ/քառ.մետր ջեռուցվող տարածքի համար՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման N1 կետով սահմանված սակագինը հաշվարկված է ջեռուցվող 120 օրերի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2000թ. հունվարի 1-ից:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
նախագահ՝ **Վ.Մովսեսյան**